ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԿԳՄՍՆ

<<Գյումրու թիվ 1 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ <<Ժողովրդական բանահյուսության ժանրերի դերը ուսումնական տարրական համակարգում>>

Կատարող՝ **Գոհար Այվազյան**

/Անուն, ազգանուն, հայրանուն/

Ղեկավար՝ **Անահիտ Փարկիթյան**

/Անուն, ազգանուն, հայրանուն/

ԳՅՈՒՄՐԻ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------2-3

Ժողովրդական բանահյուսության դերը ուսուցման տարրական դասարաններում

Ժողովրդական բանահյուսության նշանակությունը մտածողության զարգացման գործում----------4-11

Հեքիաթների, առած – ասացվածքների, դարձվածքների, հանելուկների, խաղիկ-տաղիկների, շուտասելուկ – սուտասելուկների, հաշվելուկների,առակների, օրորոցային երգերի և էպոսի ուսուցումը տարրական դասարաններում----------12-17

Եզրակացություն----------18

Օգտագործված գրականության ցանկ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը- Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենահարուստ ժանրերից են:

Որպես բանահյուսության կարևոր ժանրեր՝ առաջին հերթին ընկալվում են որպես տեքստ՝ կայուն կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկություններով:

Որպես մարդու հոգևոր գործունեության և աշխարհընկալման հատուկ միջոց՝ դրանք կապված են ծեսերի, կրոնական պատկերացումների և մտածողության տարբեր ձևերի հետ: Մայրենիի բոլոր դասագրքերում լայն տեղ է հատկացված առակների և հեքիաթների ուսուցմանը:

Դրանց նպատակն է արտահայտել ժողովրդի աշխարհայացքը, իդեալները, գաղափարները և լավագույն ձգտումները:

Սակայն ժամանակակից ստեղծագործությունների հիմնական բարոյախրատական եզրահանգումը այնքան էլ մատչելի չէ երեխաներին:

Ուսումնասիրության առարկայի արդիականությունը միտված է նոր և անծանոթ գրառված և հրատարակված հեքիաթների,ինչպես նաև հայ ժողովրդական հեքիաթների համակարգված քննությանը,դրանց խորքերում ծպտված ծիսապաշտամունքային և կրոնաառասպելական իրողությունների իմաստի բացահայտմանը: Աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Աշխատանքի նպատակներն են՝

- Ուսումնասիրել տարրական դասարաններում ուսուցանվող նյութերին ներկայացվող խնդիրները և առաջադրել դրամց լուծման նորովի մոտեցումներ:

- Ուսումնասիրել հեքիաթների, առած – ասացվածքների,առակների,դարձվածքների, հանելուկների, խաղիկ-տաղիկների, շուտասելուկների, սուտասելուկների, օրորոցային երգերի ուսուցանումը որպես երեխայի խոսքի զարգացման և մտածողության զարգացման միջոց:

Նշված նպատակներին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- Նպաստել երեխայի աշխարհընկալման զարգացմանը:Ուսումնասիրել տարրական դպրոցում բանահյուսական ժանրերի ուսուցման անհրաժեշտ ծավալը:
- Ներկայացնելի դարձնել էպոսը որպես ժողովրդի հավաքական կերպարի՝ ներառված հատվածների հիման վրա:
- Դիտարկել հիմնախնդրի վերաբերյալ տեսությունը մեթոդական գրականության մեջ: Ներկայացնել դասի շնորհանդես հեքիաթների ուսումնասիրումը որպես սովորողի կարողունակությունների բացահայտման միջոց:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը:

Աշխատանքը կազմված է ներածությունից, հիմնական բովանդակությունից, եզրակացությունից , օգտագործված գրականության ցանկից և համապատասխան նկարներից:

Հիմնական մասում խոսել ենք ժողովրդական բանահյուսության ժանրային հարստության մասին, ներկայացրել ենք դրանց դերն ու նշանակությունը մայրենիի ժամերին: Ներկայացրել ենք հեքիաթների և առակների կառուցվածքն ու տեսակները և դրանց դերը կրտսեր դպրոցականների խոսքի հարստացման համատեքստում:

Աշխատանքն ավարտել ենք եզրակացությամբ, որտեղ համառոտ մեկնաբանել ենք աշխատանքի բովանդակությունը և ներկայացրել եզրակացություններ:



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԵՐԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ժողովրդական բանահյուսության նշանակությունը մտածողության զարգացման գործում:

Տարրական դպրոցում,սկսած առաջին դասարանից,ուսուցանվում են ժողովրդական բանահյուսության նմուշներ՝առած- ասացվածքներ, շուտասելուկներ,խնդուկներ, հեքիաթներ, առակներ, դարձվածքներ, հանելուկներ, հաշվելուկներ և այլն: Հատված առ հատված ծանոթանում են էպոսին, հավաքական կոթիք ձևավորում հայ ժողովրդի մասին: Ժողովրդական բանահյուսությունը ազգային հոգևոր արժեքի մի մասն է,որը սերնդեսերունդ փոխանցվելով, հասել է մինչև մեր օրերը:Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է,նրա կոլեկտիվ բանականության և կոլեկտիվ հույզի արգասիքը:Իբրև կոլեկտիվ ստեղծագործություն բանահյուսությունն ունի որոշակի առանձնահատկություններ: Առաջին առանձնահատկությունն արտահայտվում է ինչպես՝անհատական հանճարով կոլեկտիվ հանճարը ներկայացնելու,այնպես էլ նրա հյուսվածքների կոլեկտիվ մշակման ու գաղափարական-գեղարվեստական կատարելության մեջ:Բանահյուսության մյուս բնորոշ առանձնահատկությունը նրա բանավոր հյուսվածք լինելն է,բանավոր կերպով ստեղծվելը և բանավոր գոյությունը:Բանահյուսությունը՝ իբրև հնագույն ժամանակներից ժողովրդին ուղեկցող ստեղծագործություն,իր մեջ խտացրել է ոչ միայն ժողովրդի կենսափորձը այլ նաև նրա հավատալիքները, սովորությունները, վարքն ու բարքը:

Ներկայացրել ենք ժողովրդական բանահյուսության նմուշները,որոնք զետեղված են 2-4 դասարանների մայրենիի դասագրքերում:

ԱՌԱԾՆԵՐ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Առածներն ու ասացվածքները հայ ժողովրդական բան ու բառի մարգարիտներն են: Առածները ուղղակի և փոխաբերական իմաստ ունեցող կարճ պատկերավոր ասույթներ ու դատողություններ են:Առածները ուղղակի և փոխաբերական իմաստ ունեցող կարճ պատկերավորասույթներ ու դատողություններ են:Կյանքի յուրաքանչյուր երևույթ նրանցում բնութագրվում է սրամտորեն և կատարյալ ամբողջականությամբ: Իրենց ժանրային հատկանիշով առածներին շատ մոտ են ասացվածքները: Սրանք առածներից միայն տարբերվում են նրանով, որ ուղղակի խոսքեր են և գրեթե միշտ գործածվում են առանց փոխաբերական իմաստի:Մեծ է առած-ասացվածքների պատմաճանաչողական, դաստիարակչական և գեղարվեստական նշանակությունը:Որպես համառոտ ու պատկերավոր խոսքի դասական օրինակներ՝դրանք մեծապեսնպաստում են երեխաների ոչ միայն լեզվի մշակմանը, այլև տրամաբանական ու պատկերավոր մտածողության մշակմանն ու զարգացմանը:Առածներն ու ասացվածքները ընդհանուր գծերով, գեղարվեստորեն արտահայտում են պատմական զարգացման գրեթե ողջ ընթացքը:Անսահմանորեն լայն են հայկականառածների ու ասացվածքների թեմաները, ու անսահման խոր՝նրանց գաղափարական բովանդակությունը:Ժողովրդական առած-ասացվածքները աչքի են ընկնում իրենց բանաստեղծական լեզվի ու արվեստի բարձր արժեքներով: Քիչ խոսքով շատ բան ասելու բացառիկ ուժը , պարզությունը, կոնկրետությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը և գունագեղությունը նրանց բնորոշ առանձնահատկություններն են:
Առածներում մեծ տեղ են գրավում աշխատավորներին ուղղված խրատներն ու խորհուրդները:Աշխատասիրության հենց այս բարձունքից էլ քննադատվում ծուլությունունուձրիակերությունը,գովերգվումԷաշխատասիրությունունու արդարությունը,հայրենիքի անփոխարինելիությունը,խոսքի ուժի արժեքը ,պարսավում մեծամտությունը:Բերենք մի քանի նմուշներ՝

●Ամառը որ պառկես հովերը, ձմեռը կսատկեն կովերը:

●Աշխատասիրությունը սովորում են երեք տարում, ծուլությունը՝երեք օրում: Աշխատանքը ազնվացնում է:

●Աշխատասիրությունը սովորում են երեք տարում, ծուլությունը՝երեք օրում:

●Թամբալը գիտի,թե հացը ծառի վրա է աճում:

●Սարն ինչքան էլ բարձր լինի , վրայով մի օր ճամփա կանցնի:

●Իմ լեզվով խոսող օտարն ավելի լավն է, քան իմ լեզուն չիմացող ազգակիցը:

Առածը սեղմ ու պատկերավոր խրատական ասույթ է,այլաբանական դատողությամբ:

Կազմված է մեկ-երկու նախադասությունից, երբեմն՝մի քանի բառից:
Առածը արտացոլում է հասարակական կյանքի տարբեր կողմերը, արտահայտում կենցաղային,փիլիսոփայական հասկացություններ, ուր ընդհանրացված է ժողովրդի կենսափորձը:
Բերենք առածի մի քանի նմուշներ,
.Կաթիլը քար է ծակում:

. Մի ձեռը ծափ չի տա:

. Տաշած քարը գետնին չի մնա:

. Երկաթը տաք-տաք կծեծեն:

. Ավազի վրա տուն չեն շինի:

Ասացվածքները սեղմ ու արտահայտիչ ձևով բնութագրում են կյանքի այս կամ այն երևույթը:Սրանք առածներից տարբերվում են նրանով,որ չունեն այլաբանություն:
Բերենք մի քանի նմուշներ,

. Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես:

. Խելքը բնովի է, այլ ոչ թե գնովի:

. Խելքը լավ է քան հարստությունը:

Այսպիսով առած-ասացվածքների մեջ ուղիղ իմաստի հետ մեկտեղ,այս կամ այն չափով ,արտահայտված է նաև նրա փոխաբերական իմաստը:

Դարձվածքներ

Դարձվածքները խոսքը դարձնում են ավելի դիպուկ, արտահայտիչ և պատկերավոր:

Դարձվածքների գործածությունը պայմանավորված է խոսքի բնույթով:

Դրանք իրենց իմաստային նրբերանգներով մտքին տալիս են դիպուկություն ու կենդանություն: Դարձվածքները թեև ձևով նման են բառակապակցություններին, սակայն միայն ծագմամբ են կապվում նրանց հետ: Դարձվածքը կարող է առաջանալ ոչ միայն բառակապակցություններից ,այլ նաև կազմվել միանգամից՝ որևէ բառակապակցության օրինակով:Բերենք մի քանի նմուշներ,

●Ճամփան տալ առաջը -ճամփա ընկնել

.Ականջին օղ անել-մեկի խրատը միշտ հիշել, պահել մտքում:

●Բերանը ջուր առնել-լուռ մնալ,ոչ մի բառ չասել,չխոսել

.Դու աղվես ես, ես քո պոչը – իրենք էլ պակաս հասկացող չեն:

●Աշխարհով մեկ լինել-շատ ուրախանալ,աշխարհի տեր զգալ իրեն:

Դարձվածքները օգնում են խոսքը գունազարդելուն, խոսքին հուզաոճական լիցք տալուն, արտահայտիչ դարձնելուն և այլն:Մեր լեզուն հարուստ է դարձվածքներով և նոր համ ու հոտ է տալիս խոսքին:



Օրորոցայի ին երգեր

Օրոր-օրորոցայինը ժողովրդական բանահյուսության քնարական երգատեսակ է: Կառուցված է երկտող,եռատող,քառատող կամ բազմատող տներից: Ունի կրկներգ, որոնք, շեղվելով բանաստեղծական չափից, երգին հաղորդում են ռիթմաերաժշտության բազմազանություն:

Բերենք օրոր-օրորոցայինի նմուշ՝

Օրոր, օրոր, իմ սիրուն ի կ,
Օրոր ասեմ ,դո՝ ւ նանա
Երկար ապրես կարմիր օրեր,
Կարմիր արևու նենա,
Օրոր ,օրոր ,իմ անուշ ի կ,
Օրոր ասեմ, դու՝ նանա

Հանել ու կներ

Հանելուկը դժվար լուծելի հարց է,որ մեծ մասամբ տրվում է փոխաբերության ձևով: Այլ կերպ ասած՝այն որևէ առարկայի,երևույթի փոխաբերական պատկերումն է՝ հիմնված նրանց լուծելի առարկայի և հանելուկում նրան փոխարինող առարկայի հատկանիշների նմանության վրա:

Բերենք հանելուկի նմուշ՝

Աշխարհի ծայրին կհասնի,

Հավի պոչին չի հասնի:/h հնչյուն-տառ/
Հաշվելուկը փոքրերի հետ բարձրաձայն ասվող բանաստեղծություն է՝նրանց հաշվելև արտասանել սովորեցնելու նպատակով: Ժողովրդական բանահյուսության տեսակ են խաղիկները,որոնք ունեն 5-12 վանկանի նույնահանգ կամ զուգահանգ տողեր: Ծագումով և բովանդակությամբ ՝ գեղջկական, արտացոլում են հիմնականում գյուղական կյանքի պատկերներ:Խաղիկները օգտագործվում է նաև մանկական խաղերում դերերը բաշխելու նպատակով:

Հուռին գնաց բանջարի,
Բանջար չեղավ, խոտ եղավ,
Խոտի տակին ծիտ եղավ,
Ծլվլալով դուրս թռավ:
Ծիտը թռավ գերանին՝
Կանաչ խոտը բերանին:

Շուտասելուկը լեզվահնչյունական յուրօրինակ խաղ է, վարժություն: Պետք է արագ ու բազմիցս կրկնելով՝ճիշտ արտասանել այն: Դժվար արտաբերության պատճառով հաճախ արտասանվում է ծիծաղաշարժ աղավաղումներով:Այն մանկական լեզուն վարժեցնում է հնչյունական բարդ ու ճիշտ արտասանությանը:

Բերենք շուտասելուկի և սուտասելուկի նմուշներ՝

Հեռվում սիրուն ԱՐԱՐԱՏ՝վրան ձյուն կա շատ առատ:(շուտասելուկ)

Սուտ խոսելը լավ բան չէ, եթե սուտը կատակ չէ:

Սուտասելուկ խաղի մեջ՝ սուտը համով կատակ է :(սուտասելուկ)

Առակներ



Առակ (առակն՝աչքիառաջ) բարոյախոսական բնույթի գրական ստեղծագործություն, որտեղ այլաբանությանմիջոցով ներկայացվում, ծաղրվում և քննադատության են ենթարկվում մարդկանց արածները: Առակի վերջում հեղինակը դրսևորում է իր վերաբերմունքը նկարագրածի հանդեպ, որն էլ առակի բարոյախոսությունն է:Առակի հերոսները կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներ են, լուսատուներ, բնության երևութներ: Բանահյուսության այս բոլոր տարատեսակները ուսումնասիրվում են տարրական դասարաններում,սակայն մենք ավելի խորը ուսումնասիրում ենք հեքիաթները:

Հեքիաթներ



Հեքիաթների ուսուցումը տարրական դասարաններում

Տարրական դասարանների մայրենիի դասագրքերում ամենից հաճախ հանդիպող նյութերից մեկն էլ հեքիաթներն են: Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին ու ամենատարածված ժանրերից են, դրանք առաջացել են մարդկության ծագման վաղ շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել:

Շարունակում են հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ,պարզությամբ ու խոր լավատեսությամբ:Մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանն ասել է՝<<Մեր լեզվի ու գրականության առողջ զարգացման համար պետք է մշտական տեղ հատկացնել հայրենի երկրի բանավոր գրականությանը, նրա ամեն տեսակ ավանդություններին, հեքիաթներին, առակներին, առած-ասացվածքներին>>:

Հեքիաթը բանահյուսական ժանր է, գերազանցապես արձակ, բանավորպատմվածք՝ կախարդական, արկածային, կենցաղային բովանդակությամբ, հյուսված գեղարվեստական հնարանքի յուրատեսակ միջոցներով:Համաշխարհային բանագիտության մեջ տարբեր տեսություններ ու կարծիքներ կան հեքիաթի ծագման ու ձևավորման վերաբերյալ:Հեքիաթների հեղինակները հիմնականում ժողովուրդն է: Այն,ինչ կյանքում անհնարէ եղել իրականացնել, մարդիկ երազել են, ցանկացել և տեսել հեքիաթներում:Ավելի ուշ հեքիաթներ ստեղծվել են առանձին հեղինակների կողմից՝ ժողովրդական պատումների մշակմամբ կամ ինքնուրույն: Հեքիաթները բաժանվում են մի քանի տեսակների: Տարածված են

- հրաշապատում կամ կախարդական,
- իրապատում,
- կենդանական
- արկածային
- հերոսական-պատմական
- կենցաղայ ին-առօրեական

<u>Կենդանական</u> հեքիաթները առաջացել են խոր նախնադարում,երբ մարդը նոր էր սկսում կենդանիներին ընտելացնել, դրա համար էլ այս հեքիաթներում գործող անձերը հիմնականում կենդանիներ են: Օրինակ՝‹‹Առյուծն ու մուկը››, ‹‹Պոչատ աղվեսը››, ‹‹Արջի և վարազի կռիվը›› և այլն: Նրանց միջոցով այլաբանորեն ներկայացվում են մարդկային որոշակի հատկություններ:Մի կողմից՝չարություն, նախանձ,ագահություն,մեծամտություն, մյուս կողմից՝բարություն, անձնազոհություն, վեհանձնություն, ազնվություն, արդարամտություն, հավատարմություն, իմաստություն:

<u>Իրապատում</u>հեքիաթներում հեքիաթային ոչ այնքան փաստերն են՝ գործողություններն ու գործող անձիք, որքան գործողությունների կամ սյուժետային գծի լուծումները,որոնք, ինչպես հատուկ է հեքիաթներին,շատ պարզ ու դյուրին լուծում են ստանում, որպիսին իրականության մեջ չի կարող լինել:

Իրապատում հեքիաթներն արտացոլում են ժողովրդի կյանքը, մարդկային վսեմ ձգտումները, հալածվածների և ճնշվածների ճակատագիրը, ծաղրվում են ժողովրդին կեղեքողները, մարդկային զանազան արատներ:

<u>Հրաշապատում</u> հեքիաթներում պատկերվում է բարի ուժերը մարմնավորող հերոսների պայքարը չար ուժերի՝դևերի,կախարդների,վհուկների,վիշապների դեմ:Դեպքերը տեղի են ունենում ստորերկրյա թագավորությունում, երևակայական աշխարհներում,այլ աշխարհներում,որտեղ անհավատալին դառնում է իրական:Հերոսներին օգնում են ձին,թռչունը,բարի պառավը կամ իմաստուն ծերունին: Բոլոր հեքիաթների մեջ չարի և բարու պայքար կա,և այդ պայքարը միշտ ավարտվում էբարի ուժերի հաղթանակով:Շատ հեքիաթներում էլ ծաղրվում են ժողովրդին կեղեքողները, մարդկայինզանազան արատները:Օրինակ՝Հովհաննես Թումանյանի ‹‹Բարեկենդանը››,‹‹Ոսկու կարասը››Հեքիաթների մեծ մասին բնորոշ է նույն սկիզբը, ինչպես՝‹‹Լինում է, չի լինում››, ‹‹Ժուկով ժամանակով››,

‹‹Կար չկար›› և նմանատիպ վերջաբաններ՝‹‹Երկնքից երեքխնձոր ընկավ››,

‹‹Նրանք հասան իրենց մուրազին,դուք էլ հասնեք ձեր մուրազին››,
‹‹Երկնքից երեք աստղ ընկավ›› և այլն:
Մայրենի լեզվի ընթերցարաններում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ,այլև հեքիաթների գրական մշակումներ:Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղ.Աղայանը, Հովհ.Թումանյանը,Ստ.Զորյանը և ուրիշներ, որոնց մշակած գեղեցիկ հեքիաթները մեր դասագրքերի զարդն են:Պետք է նկատել, որ անցյալում մեծ վեճեր են եղել հեքիաթները դասագրքերում զետեղելու շուրջ: Հայտնի է, որ 19-րդ դարի վերջին մեթոդիստ Ե.Ղազարյանը լուրջ մեղադրանքներ առաջադրեց Ղ.Աղայանին՝հեքիաթների միջոցով երեխաներին իրականության մասին սխալ պատկերացում տալու կապակցությամբ:Աղայանն իր հայտնի պատասխանում միանգամայն հերքեց Ղազարյանի տեսակետը՝գտնելով,որ մարդու հանճարի սաղմերը պետք է նաև նրա լսած հեքիաթներում փնտրել, որովհետև դրանք ոչ միայն հոգուն սնունդ են տալիս,այլև մտքին ու երևակայությանը թռիչք, հետևաբար առանց հեքիաթների ուսումնասիրության երեխաների կրթության գործը կատարյալ լինել չի կարող: Հեքիաթի դասավանդումը ունի երկու հիմնական փուլ՝բովանդակության կամ սյուժեի հաղորդում և հեքիաթային կամ երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ խիստ կարևոր ու անհրաժեշտ են նյութի յուրացման ու նրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների իրականացման համար և երբեք չեն կարող փոխարինել միմյանց: Տարրական դասարաններում հեքիաթներն ամենից առաջ պետք է դասավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություններ, այսինքն՝նախապատրաստական զրույցի միջոցով հող նախապատրաստել այն ճիշտ ընկալելու համար, ամբողջ նյութի արտահայտիչ ընթերցման միջոցով ապահովել նրա գեղարվեստական ու դաստիարակչական ներգործությունը,սովորեցնել լավ կարդալ, անծանոթ բառերն ու մտքերը բացատրել, հեքիաթի բովանդակությունը մանրամասնորեն ու համառոտ, փոփոխելով ու ստեղծագործորեն վերարտադրել,գործող անձերն ու նրանց կատարած գործողությունները նկարագրել կամ բնութագրել, հարցերով ամփոփել հեքիաթի վերաբերյալ երեխաների հաղորդած տեղեկությունները և այլն:

Հեքիաթի բնագրային ուսումնասիրությունն ավարտելուց հետո աշակերտներիառաջ պետք է բաց անել հեքիաթային քողը, ցույց տալ նրանում եղած իրականն ու անիրականը, ճշմարտապատումն ու երևակայականը,իհարկե այդ ամենը կատարելով կոնկրետ նյութի վրա, պարզ ու մատչելի ձևով, որպեսզի երեխաները տեսական բացատրությունները կապեն գործնականի հետ,յուրաքանչյուր բառ և հասկացություն իմաստավորեն կոնկրետ բովանդակությամբ:Հեքիաթներում եղած

իրականի ու անիրականի սահմանագծումն ու տարբերակումն զգալի դարձնելու համար հաճախ կարելի է նաև համապատասխան օրինակներ բերել արտադասարանային ընթերցանության միջոցով երեխաների կարդացած կամ նախորդ դասարաններում անցած հեքիաթներից:Յուրաքանչյուր հեքիաթի դասավանդումը ճիշտ տանելու համար ուսուցիչն ամենից առաջ իր համար պետք է պարզի, թե որոնք են նրա իրական ու անիրական կողմերը,ինչ փոխհարաբերությանմեջեն գտնվում դրանք և ինչ են սովորեցնում երեխաներին,ինչու է ժողովուրդը դիմել հարցի հեքիաթային լուծմանը:Հեքիաթի դասավանդումը պետք է ավարտվի նրա բարոյախրատական կամ դաստիարակչական եզրակացությամբ, որը այս տիպի նյութերի ուսումնասիրության ամենահիմնական ու առանձնահատուկ կողմերից մեկն է: Պետք է պարզել աշակերտները ի՞նչ սովորեցին ուսուցանվող հեքիաթից, ո՞րն է նրա հիմնական միտքը, գաղափարական բովանդակությունը: Ի՞նչ կար հեղինակի ասվածի տողատակում և այլն:Հեքիաթների դասավանդման ամենավերջին փուլն այն համապատասխան առածների,ասացվածքների և հանելուկների հետ կապելն է:Հեքիաթների դասավանդման այս եղանակից բացի գործադրման համար հանձնարարելի կարելի է համարել նաև պատմողական և հորինողական ձևերը, որոնք հեքիաթների ուսումնասիրման մեջ բազմազանություն ու հետաքրքրություն կմտցնեն:Պատմողական ձևով անցնելիս հեքիաթը չի ընթերցվում,այլ պատմվում է ուսուցրի կողմից գեղարվեստական պատմումի ու արտահայտչական միջոցների հնարավոր լայն օգտագործմամբ:

Հեքիաթները կարելի է դասավանդել նաև հորինողական ձևով,որն ակտիվ, ստեղծագործական մեթոդ է, և որպես այդպիսին, շատ լայն կիրառություն պետք է ունենա հեքիաթների ուսումնասիրության ընթացքում:Այս մեթոդով անցնելիս աշակերտներից չենք պահանջում,որ նրանք պատմելիս տառացիորեն ապահովեն հեքիաթի սյուժետային գիծը:Երեխաների մտքերին ազատություն ենք տալիս՝թողնելով,որ յուրովի վերարտադրի հեքիաթի բովանդակությունը,ցանկացած փոփոխություններ մտցնի սյուժետային գծի ու դեպքերի զարգացման մեջ, եթե, իհարկե,այդ փոփոխությունները չեն հակասում հեքիաթի ընդհանուր ոգուն:Հեքիաթների ուսումնասիրությունը տարրական դասարաններում կարելի է անցկացնել հետևյալ պլանով.

1. Նախապատրաստական զրույց:
2. Հեքիաթի առաջին ընթերցում(սովորողի կողմից):
3. Հեքիաթի երկրորդ ընթերցում և բառերի բացատրում(աշակերտների

կողմից):

4.Հեքիաթի վերլուծություն ըստ առանձին մասերի,բովանդակության ու լեզվի:

5.Մասերի վերնագրում և պլանի կազմում:

6.Բովանդակության վերարտադրում:

7.Ստեղծագործության հեքիաթային կողմի բացահայտում:

8.Հետադարձ կապի ապահովում

Ժամանակակից կրթական համակարգը պահանջում է, որ սովորողին տրվի այնպիսի կրթություն, որը նրան հնարավորություն կտա ոչ միայն լսել հեքիաթը կամ կարդալ այլ ձեռք բերել անկաշկանդ գործելու և արտահայտվելու միջոցներ, զարգացնի հմտություն և կարողություններ: Կարողանա սովորածը կիրառել գործնականում:

Էպոս

Էպոսը էպիկական բովանդակությամբ բանաստեղծական կամ գրականության գործ է, որը ավանդաբար ներկայացնում է որևէ ազգի մշակութային կամ ինքնաճանաչողական ոգին: Յուրաքանչյուր հայ սովորող պետք է ճանաչի իր էպոսի հերոսի կերպարը՝Սասունցի Դավթին:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

‹‹Գրական կերպարների համեմատական վերլուծության կարողության ձևավորումը՝ հեքիաթներն ուսումնասիրելիս›› ավարտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության ենք ենթարկել երեխայի **մտածողության**, խոսքի և հաղորդակցման կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկություններն ու վեր հանել երեխայի զարգացման գործում հեքիաթների դաստիարակչական նշանակությանն առնչվող կետերը:

Ուսումնասիրության ընթացքում հանգել ենք այն եզրակացության, որ խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը:

- Հեքիաթները մեծ նշանակություն ունեն երեխայի անձի ձևավորման համար, որպես երեխայի խոսքի հարստացման սկզբնաղբյուր: Այն զարգացնում է պատկերային խոսքը, գեղագիտական ճաշակը և նպաստում բարոյական հասկացությունների ձևավորմանը:

- Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հեքիաթների միջոցով կարելի է երեխայի մեջ բնավորության, գործելակերպի դրական հատկանիշներ դաստիարակել: Այնտեղ կա բարի և չար ուժերի պայքար, և մշտապես հաղթում է բարին: Կարևորվում է բարությունը, մարդկանց օգնելու պատրաստակամությունը, սերը, կարեկցանքը:

- Հեքիաթներն ունեն կրթիչ և դաստիարակիչ ուժ, ուստի թույլ են տալիս դաստիարակել՝ դրականի վրա հենվելով:

  - Այսպիսով, հեքիաթների հիմնական նպատակն է արթնացնել երեխայի երևակայությունն ու ստեղծագործական պոտենցիալը, նպաստել սովորողների աշխարհընկալման զարգացմանը, ընդլայնել բառապաշար, օգնել ճիշտ և տրամաբանական խոսք կառուցել:

Կարևոր է նաև այն, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի էմոցիոնալ և պատկերավոր:Ուստի անհրաժեշտ է հեքիաթների ուսուցման միջոցով նպաստել աշխարհաճանաչողական, երևակայական, ստեղծագործական և խոսակցական մակարդակների զարգացմանը համապատասխան ժամանակակից մեթոդների կիրառմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. , Մայրենիի դասավանդման մեթոդիկա, Եր. Զանգակ հր. 2011թ.
2. Գրիգորյան Գր. Ա. , Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., Լույս հրատ., 1980թ.
3. Հայոց լեզու և գրականություն գիտամեթոդական ամսագիր 4, Եր., ԿԱԻ հրատ., 2013թ
4. Մանկական հանրագիտարան, Եր. 1984թ.
5. Սարգսյան Վ., Մայրենի 2, Եր., Մանմար հրատ., 2019 թ.
6. Սարգսյան Վ., Մայրենի 3, Եր., Մանմար հրատ. 20 20թ.
7. Սարգսյան Վ., Մայրենի 4, Եր., Մանմար հրատ., 2018 թ.